



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 19 ՄԱՅԻՍ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 105

ԱՐԳԻԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻԻՆԸ

Քոհութիւն յայտնեցէք Տիրոջ,
բարձր հնչեցուցէք անոր անունը.
բոլոր ժողովուրդներուն մանչցուցէք անոր մեծամեծ գործերը:
Անիկա իր ուխտը միտքէն չի հաներ բնաւ,
իր խոստումը գալիք բոլոր սերունդներուն համար է:
Զի մոռնար այն ուխտը, որ կնքեց Արրահամին հետ,
այն ինչ որ երդումով Իսահակին խոստացաւ,
եւ նոյնը՝ կանոնի պէս՝ կրկնեց Յակոբին,
իրբեւ յաւիտեանական ուխտ՝ իր ժողովուրդին:
Տէրը սով բերաւ անոնց երկրին վրայ,
ուտեիքի ամէն պաշար սպառեց:
Բայց Յակոբի սերունդները փրկելու համար
անոնցմէ առաջ եգիպտոս դրկեց Յովսէփը,
որ իրբեւ ստրուկ վանառուեցաւ:
Անոր ոտքերը շղթաներով նեղեցին,
անոր վիզին երկաթէ օղակ անցուցին,
մինչեւ իր խօսքը իրականացաւ,
Տիրոջ խօսքը եկաւ անոր ըսածը հաստատեց:

ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պահապան ամենայնի Քրիստոս,
այ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ԿՈՐՍՈՒԿԾ ԳԱԲԱԹՈՐ (44:1-17)

Վերջին առիթ մը եւս խոստովանութեան ու գոջումի, այս անգամ մեղադրելով Յովսէփին գաւաթին գողնալը: «Ինչո՞ւ բարիքին փոխարէն չարիք հապուցանեցիք» (44:4): Այսպէղ խօսքը, ոչ միայն գաւաթի գողնալու մասին է, այլ այն մեծ չարիքին որ եղբայրները ըրին, ծախելով Յովսէփը իբրեւ սարուկ: Եւ ահա պահը կը հասնի, որ Յուդա ինք, իր եւ իր եղբայրներուն փոխարէն, պատրաստակամութիւն կը յայտնէ, որ տիրոջը ծառաները ըլլան, որոս քով որ յայտնուի գաւաթը: Իսկ երբ կը յայտնուի գաւաթը, կը խոստովանին ըսելով. «Աստուած քու ծառաներուդ յանցանքը յայտնեց» (44:16):

Յաճախ դէպքեր կը պատահին մեր կեանքին մէջ, ուր առիթ կը տրուի իւրաքանչիւրիս անդրադառնալու, գիտակցելու, որպէսզի գոջումով ու ապաշխարութեամբ Աստուծոյ վերադառնանք: Սա կը նշանակէ, որ այդ դէպքերը պատահական չեն, այլ Աստուծոյ թոյլտրութեամբ կատարուած դէպքեր են, որոնք մեզ կ'առաջնորդեն դէպի փրկութիւն: Որովհետեւ, ի վերջոյ, Աստուծոյ նպատակը մարդուն, ու այս պարագային մեղաւոր մարդուն, վերադարձն է, ինչպէս պիտի ըսէ Աստուած Եզեկիէլին. «Ես մեղաւորին մահը չեմ ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը»:

ՅՈՎՍԷՓ ԻՆՔՉԻՆՔ ԿԸ ՅԱՅՏՆԷ (45:1-28)

Երբ ամբողջական խոստովանութիւնը տեղի կ'ունենայ պահը կը հասնի, որ Յովսէփ ինքզինք յայտնէ, ու մանաւանդ Աստուծոյ ծրագիրը յայտնէ. «Ես ձեր եղբայրը Յովսէփն եմ, որ Եգիպտոս տարուելու ծախեցիք: Ուստի զիս հոս ծախելնուդ համար մի՛ վշտանք ու ձեզի ծանր չերեւնայ, վասնզի Աստուած զրկեց զիս ձեր առջեւէն՝ կեանք պահելու համար: Որպէսզի երկրի վրայ ձեզի սերունդ պահէ եւ մեծ ազատութիւնով ձեզ ապրեցնէ: Արդ, զիս հոս զրկողը դուք չէք, հապա Աստուած է» (45:5-8): Յովսէփ ինքզինք կը յայտնէ անոնց, որոնք զինք չէին ուզեր: Զինք կ'ապրէին: Բայց այդ բոլորին մէջ Յովսէփ ցոյց կու տայ Աստուծոյ նախախնամութիւնն ու ծրագիրը: Ուրեմն, ի՞նչ կարելի է ըսել, քանի Աստուած է, ու Իր ծրագիրն է որ պիտի կատարուի, ապա եղբայրները ինչո՞վ յանցաւոր են: Նոյնը կարելի է րեւանել Քրիստոսով կատարուած փրկութեան ծրագիրը, որուն մէջ դերակատար էր Սուրբ Հոգին: Աստուծոյ ծրագիրը առաջ կ'երթայ հակառակ մարդոց սրտով թողնելով իր խոչընդոտներուն. երբեմն այդ խոչընդոտները իրենք կը ծառայեն Աստուծոյ գործին: Ուրեմն, սխալը գործողը ինք չ'արդարանար իր կատարածին համար, նոյնիսկ եթէ այդ կատարուածը կը ծառայէ Աստուծոյ ծրագրին, բայց ան որ կ'անդրադառնայ իր սխալը եւ կը գոջայ՝ կը փրկուի: Նոյնպէս ալ Յովսէփի եղբայրները անդրադարձան, գոջացին եւ այսպիսով արժանացան Աստուծոյ ներողամտութեան: Բայց Յուդայի պարագային այդպիսին չեղաւ եւ չապաւինեցաւ Աստուծոյ ներողամտութեան, եւ ինք ուզեց ինքզինքին դատաւճիռ տալ: Արդ, համար է, որ Քրիստոս վայ կը կարդայ. «Մարդու Որդին պէտք է որ մահուան մատնուի, բայց վայ այն մարդուն որուն ձեռքով կը մատնուի»: «Վայ»ը այն իքստով որ Քրիստոս սկիզբէն գիտէր որ Յուդան պիտի գոջում չունենայ: Միւս կողմէ, «վայ»ը նաեւ իբրեւ ցաւի արտայայտութիւն:

Եւ ահա, Յովսէփի պատմութիւնը կը դառնայ շուքը, նախապիպարը, իր բոլոր երեսներով, գալիք այն ճշմարտութեան, որ Քրիստոսով իր լրումը պիտի գրնէր: Միւս կողմէ, Փարաւոնին եւ անոր փան ուրախութիւնը այս լուրով: Արդեօք մենք որքանով կ'ուրախանանք երբ մեղաւորը դարձի կու գայ, գոջումով ու ապաշխարութեամբ, եւ Քրիստոս Ինքզինք կը յայտնէ ըսելով. «Ես եմ»: Եւ ահա, Յակոբ կ'ուրախանայ երբ կը լսէ որ Յովսէփ ողջ է, նոյն այն ուրախութիւնը, որ ունեցան իւղաբեր կանայք Քրիստոսի յարութեամբ: Ի վերջոյ, Յակոբի նման, նախքան այս աշխարհէն մեկնումը Յովսէփը, այսինքն՝ Քրիստոսը րեւանելու, ընդունելու իբրեւ Տէր եւ Փրկիչ: